

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ, ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐԲ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՀՄԵՂ ՌԵՖԻՔ ԱԼԹԸՆԱՅԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Բանալի բառեր – Հայոց ցեղասպանություն, տեղահանություն, Ահմեդ Ռեֆիք Ալթընայ, Էսքիզեհիր, հուշեր

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի տեղահանության, զանգվածային բռնությունների վերաբերյալ թուրքական իշխանությունների պաշտոնական դիրքորոշմանը վերաբերող վկայություններ կան պետական ու ռազմական բազմաթիվ գործիչների հուշերում, որոնց թվում յուրահատուկ են օսմանյան բանակի սպա Ահմեդ Ռեֆիք Ալթընայի (1881-1937) հուշագրական երկու փոքրածավալ գրքույկները:

Մինչ պատերազմը նա ռազմական լիցեյում աշխատել է իբրև պատմության, աշխարհագրության ու ֆրանսերենի ուսուցիչ և Թուրքիայում հայտնի է իր մի քանի հարյուրի հասնող պատմագիտական ուսումնասիրություններով¹: Հարկ է նշել, որ թուրք գրող Փեյամի Սաֆայի կողմից «կայսրության վերջին և հանրապետության առաջին պատմաբան»² որակումը ստացած Ա. Ռ. Ալթընայը անդամակցել է սուլթան Մեհմեդ Ռեշաթի հրամանով 1909 թ. հիմնադրված «Օսմանյան պատմության կոմիտեին» (Târih-i Osmânî Encümeni), իսկ 1925 թ. որոշ ժամանակ նույնիսկ ղեկավարել այն³: Հայտնի պատմաբան Հալիլ Ինալչըքը նրան համարում է Հանրապետական Թուրքիայում ժողովրդական կամ հանրային պատմագրության հիմնադիր⁴: Ուշագրավ է սակայն, որ օսմանյան ազգայնականությունն քարոզելու պատճառով կառավարական բարձր շրջանակները նրան հալածել են, իսկ իր հայացքների համար նույնիսկ արժանացել է Մուսթաֆա Քեմալի քննադատությանը⁵:

¹ Տե՛ս **Gökman M.**, Tarihi Sevdiren Adam: A. R. Altınay, İstanbul, 1978, s. 113-115:

² Տե՛ս **İnalçık H.**, Türkiye’de modern tarihçiliğin kurucuları // “Muhafazakar düşünce”, 2006, n° 7, s. 9:

³ Türk dünyası edebiyatçıları ansiklopedisi, Ankara, 2002, s. 373.

⁴ **İnalçık H., Yediyıldız B.**, Osmanlı araştırmaları, 12. Türk tarih kongresi 4-8 Ekim 1999, Kongreye sunulan bildiriler, Ankara, 2002, s. 90.

⁵ Մանրամասն տե՛ս **Türk İ. C.**, Osmanlı Son Dönem Tarihçi - Eğitimcisi Ahmed Refik (Altınay) ve Tarih Eğitimi // “History Studies”, 2011, vol. 3/3, p. 351-362:

Հիշատակության է արժանի նաև այն փաստը, որ 1930-ական թվականներին Ա. Ռ. Ալթընայը կարևոր դեր է ունեցել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին պատկանող Սուրբ Հակոբ գերեզմանոցի տարածքը թուրքական պետության օգտին բռնագանձելու հարցում: Դեռևս սուլթան Մուլեյման I Քանունիի (1494-1566) կողմից հայ համայնքին նվիրաբերված այս տարածքի սեփականության հարցով հարուցված դատական գործին Ալթընայը մասնակցել է որպես փորձագիտական կոմիտեի անդամ և հայտարարել, որ գերեզմանատան տարածքի՝ հայերի պատկանելությանն առնչվող փաստաթղթերը կեղծ են: Սույն դատական գործը տևել է շուրջ երեք տարի՝ 1931-1934 թթ.: Ընդունված որոշմամբ Հայոց պատրիարքարանը ոչ միայն զրկվել է գերեզմանոցի տարածքի մեծ մասից, այլև նրան պարտադրել են փոխհատուցել պատասխանող կողմի դատական և փաստաբանական ծախսերը¹: Այս փաստը ավելի հետաքրքրական է դառնում, եթե հաշվի առնենք, որ իր «Երկու կոմիտե՝ երկու ոճիր» գրքում Ա. Ռ. Ալթընայը քննադատում է հայերի ունեցվածքի պետականացման ու սեփականաշնորհման քաղաքականությունը: Առհասարակ նրա՝ 1915 թ. Էսքիշեհիրում ռազմական մատակարարման հանձնաժողովի նախագահի պաշտոնում անցկացրած ժամանակահատվածը ամփոփող նոթերում բավականին շատ են հայերի տեղահանությանը վերաբերող այնպիսի փաստեր ու մեկնաբանություններ, որոնք ինչ-որ առումով դուրս են թուրքական պաշտոնական թեզերի ժխտողական շրջանակներից:

Ա. Ռ. Ալթընայի գիրքն ամփոփում է 1918 թ. «Իքդամ» թերթում տպագրված տասներեք մասից բաղկացած հոդվածաշարը: Օսմաներենով լույս տեսած այս գիրքը տառադարձվել է լատինատառ այբուբենով, ապա նաև թարգմանվել հայերեն և անգլերեն²: Գիրքը վերնագրելով «Երկու կոմիտե՝ երկու ոճիր»՝ Ա. Ռ. Ալթընայը փորձում է հավասարության նշան դնել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ու «հայկական կոմիտեների» գործունեության միջև: Չնայած նման վերնագրին և գրքի երկրորդ հատվածում հակահայկականության վառ դրսևորումներին՝ թուրք պատմաբանները, նույնիսկ Ա. Ռ. Ալթընայի կենսագրությամբ զբաղվողները, այդուհանդերձ, փորձում են անտեսել գրքի գոյությունը, չհիշատակել այն կամ որակել որպես կեղծարարություն: Պատահական չէ, որ գրքի՝ ժամանակակից թուրքերենով երկու հրատարակությունների առաջաբանների հեղինակներ Օսման Սելիմ

¹ Մանրամասն տե՛ս **Gökmen M.**, նշվ. աշխ., էջ 85-91, **Nalci T., Dağhoğlu E. C.**, Bir Gasp Hikayesi, 27 Ağustos 2011, <http://bianet.org/bianet/azinliklar/132420-bir-gasp-hikayesi> (մուտքի ամսաթիվ՝ 28.05.2019):

² Տե՛ս **Ռեֆիկ Ա.**, Երկու կոմիտե՝ երկու ոճիր, Երևան, 1997, **Refik A.**, Two Committees Two Massacres, Firodil Publishing House, 2006: Գրքի օսմաներեն տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://archive.org/details/ikikomiteikikita00ahme/page/79>- (մուտքի ամսաթիվ՝ 24.08.2019): Սույն հոդվածում մեջբերումները անգլերեն տարբերակից են (այսուհետ այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ):

Քոջահանօղլուն և Հալուք Դուրսունը թուրքական ժխտողականության շրջանակներում պնդում են, որ հայերի տեղահանություններին ու կոտորածին վերաբերող Ա. Ռ. Ալթընայի վկայությունները ընդամենը չափազանցություններ են¹: Օ. Ս. Քոջահանօղլուն նույնիսկ դրանք համարում է սոսկ 1919 թ. Թուրքիայում տարածված հակաիթթիհադականության մոդայի դրսևորում (էջ 9-10): Նմանատիպ մոտեցում է ցուցաբերում նաև Ալթընայի հուշերի ուսումնասիրությամբ զբաղվող թուրք գիտնական Քենան Օզքանը, որը երիտթուրքերի քննադատությունը համարում է ժամանակաշրջանի թելադրանք² և հեղինակի անձնական կանխակալ վերաբերմունքի դրսևորում³:

Անգլերեն տարբերակի առաջաբանի հեղինակ, ստամբուլցի, ներկայումս ավստրալիացի ասորի պատմաբան Ռաչո Դոնեֆը իրավամբ նշում է նման մեկնաբանությունների կանխատեսելիությունն ու անհիմնությունը (էջ 5-6):

Փորձելով վերլուծել գրքի հայկական անդրադարձները՝ նշենք, որ 1919 թ. հունվարի 16-ով թվագրված հեղինակային առաջաբանում նշվում է. «Հարյուր տարի անց պատմաբանի համար փաստաթուղթ ծառայելով՝ այս փոքրիկ գիրքը պատմելու է իրականության ամբողջ ողբերգականությունը» (էջ 10): Ըստ Ալթընայի՝ դրա մեղավորները երիտթուրքերն էին, որոնց անհաջող քաղաքականության պատճառով 600-ամյա Օսմանյան կայսրությունն անկում ապրեց: Հեղինակի խոսքերով՝ Թալեաթն ու Էնվերը ազդեցության, բացարձակ իշխանության և ստերի միջոցով մատների վրա էին խաղացնում ամբողջ երկիրը (էջ 22): Ա. Ռ. Ալթընայը նրանց մեղադրում է կաշառակերության, բանակը սեփական նպատակների համար օգտագործելու համար, ապա նշում, որ իրավիճակն այնքան զավեշտալի էր դարձել, որ Էնվերի հայրն իր այցեքարտի վրա որպես տիտղոս սկսել էր գրել «Էնվեր փաշայի հայր» (էջ 55): Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարման ժամանակաշրջանը իթթիհադականների հետ համեմատելով՝ պատմաբանը կարծես վերաբժևորում է սուլթանի գործունեությունը և գրում, որ 1918 թ. սուլթանի թաղման թափոքի շուրջ հավաքված հազարավոր մարդիկ գոչում էին. «Բարձրացրո՛ւ գլուխդ, տե՛ս, թե՛ ում ես դու մեզ թողնում» (էջ 62):

Նշելով Օսմանյան կայսրության տարածքում բոլոր էթնիկ տարրերի համերաշխ ապրելու հանգամանքն ու հայերի՝ առավել վստահելի ազգերի շարքում գտնվելու փաստը՝ Ահմեդ Ռեֆիքը հայերի անջատողականության հարցում մեղադրում է մեծ տերություններին ու երիտթուրքերին: Սրա հետ մեկ-

¹ Տե՛ս **Refik A.**, Kafkas yollarında: İki komite, İki kitâ, İstanbul, 1998 (ed. O.S. Kocahanoğlu), **Altınay R. A.**, İki Komite İki Kitâ, İstanbul, 1999 (ed. Haluk Dursun):

² Տե՛ս **Özkan K., Kılıç E.**, Ahmed Refik'in "İki Komite, İki Kital" Adli Eseri ve Eskişehir'deki Ermeni Tehcirine Dair Gerçekler, s. 596, https://www.academia.edu/9213426/AHMED_REF%C4%B0K_%C4%B0N_%C4%B0K%C4%B0_KOM%C4%B0TE_%C4%B0K%C4%B0_KITAL_ADLI_ESER%C4%B0_VE_ESK%C4%B0%C5%9EEH%C4%B0R_DEK%C4%B0_ERMEN%C4%B0_TEHC%C4%B0R%C4%B0NE_DA%C4%B0R_GER%C3%87EKLER (մուտքի ամսաթիվ 25.08.2019):

³ Տե՛ս նույն տեղում, էջ 598:

տեղ՝ նա հայերին ևս մեղադրում է անկախության համար պայքար ծավալելու համար. «Թուրքերը չգիտեին ռուսերի մասին: Հայկական կոմիտեները դրանք բերեցին Թուրքիա և փորձեցին սպանել սուլթանին: Որքան մարդ մահացավ Յըլղըզի պայթյունի ժամանակ» (էջ 47)¹: Իսկ հետպատերազմյան շրջանում Ստամբուլում դաշնակիցների գործերի ներկայության կապակցությամբ նա գրում է. «Ստամբուլի բնակիչների իրական թշնամին ոչ թե քաղաքը գրավողներն էին, այլ թուրքերի պարտությունը թշնամուց առավել փափագող հույներն ու հայերը, որոնք դարեր շարունակ օսմանյան իշխանությունների կողմից անարգանքի և անտարբերության են արժանացել» (էջ 14):

Հետևելով պաշտոնական թեզին՝ Ալթընայը դատապարտում է Վանի այսպես կոչված «ապստամբությունը», սակայն նշում, որ իշխանությունները պետք է պատժեին միայն մեղավորներին, այլ ոչ թե ընտրեին արևելյան հարցի լուծման ամենահեշտ տարբերակը՝ մի ամբողջ ժողովրդի տեղահանությունը (էջ 27): Նա շեշտում է, որ կովկասյան ճակատից ու ռուսական սահմանից հեռու գտնվող օսմանյան պետության ներքին շրջաններում՝ Բուրսայում, Քոնիայում կամ Անկարայում ապրող հայերը պատերազմի հետ որևէ առնչություն չեն ունեցել (էջ 28):

Հայերին անվանելով «մահաբեր կոմիտեների արյունարբու հավակնությունների գոհ»՝ Ա. Ռ. Ալթընայը նույնիսկ գրում է, որ Աղափազարի ու Էսքի-շեհիթի թուրքերը դիմել են կառավարությանը՝ իրենց հայ հարևաններին փրկելու խնդրանքով, սակայն անօգուտ (էջ 36):

Հետաքրքիր է, որ հայերի և հույների անկախացման պայքարի համատեքստում Ալթընայը պնդում է, որ թուրքերը ևս դժգոհ էին իթթիհադական վերնախավից, բայց նրանք, ի տարբերություն այլոց, ոչ հույների համար հիմք ունեին, ոչ էլ անկախության երազանք. «Թուրքն իր երկրում ամենաանօգնականն էր, ամենաանպաշտպանը» (էջ 24): Կրկին տուրք տալով թուրքական թեզերին՝ Ահմեդ Ռեֆիքը շատ է գրում նաև անպաշտպան թուրքերի սպանությունների մասին, սակայն հույժ կարևոր է այն հանգամանքը, որ նա պատմում է Հատուկ կազմակերպության (թուրք. Teşkilat-ı Mahsusa) կողմից Ստամբուլից երկրի ներքին շրջաններ ուղարկված՝ բանտերից ազատված մարդասպանների և գողերի խմբավորումների մասին, որոնք իրագործել են հայերի դեմ ամենամեծ հանցագործությունները (էջ 28):

Տեսական բնույթի պատմագիտական այս մտորումներից զատ՝ գրքում

¹ Խոսքը 1905 թ. հուլիսի 21-ին Աբդուլ Համիդ II-ի դեմ ՀՅԴ-ի կազմակերպած մահափորձի մասին է, որը հայտնի է նաև «Յըլղըզի մահափորձ» անվամբ, քանի որ իրականացվել է այն պահին, երբ սուլթանը ուրբաթնօրյա աղոթքից հետո վերադառնում էր Յըլղըզ մզկիթից: Մի քանի տասնյակ մարդու կյանք խլած պայթյունի արդյունքում Աբդուլ Համիդը չի տուժել: Այդ մասին մանրամասն տե՛ս «Երլղըզի մահափորձը: Եղեռնական ատեանի դատավարությունը տեղի ունեցած Պոլսոյ մէջ, 1905 նոյեմբերին: Ստոյգ տեղեկություններ մահափորձի մասին», Աթէնք, 1933:

կան Էսքիշեհիրում կանգ առած հայերի խմբերին առնչվող բազմաթիվ նկարագրություններ: Այթընայը գրում է, որ տեղահանվածների թվում էին նույնիսկ թոքախտավորները, մահացու հիվանդներն ու անդամալուծները (էջ 33): Ինչպես նա նշում է, բոլորին օգնելն անհնար էր, ավելին՝ նրանց նկատմամբ «անարդար ճնշումն այնպիսի խոր ատելություն էր առաջացրել, որ նույնիսկ ամենաանօգնական միայնակ խեղճ կինը [եթե օգնություն առաջարկեիք] խստորեն կնայեր ձեր դեմքին և անվախ կքայլեր դեպի փորձանք, աղետ, սով ու մահ՝ տանելով իր քարացած սիրտն ու վիրավոր հոգին» (էջ 30):

Աքսորյալ հայերի դրության նկարագրությունների տողատակում հետաքրքիր է օսմանյան պաշտոնյաներին հասուկ՝ անձնական պատասխանատվության հարցի քննարկումը: Բազմիցս շեշտելով, որ տեղահանության հետ որևէ կապ չի ունեցել՝ Այթընայը պատմում է իր մարդասիրական վարքի մասին, օրինակ՝ հինգ-վեցամյա հայ աղջնակի՝ կապուտաչա Սիրանույշի նկատմամբ: Եղբոր ու տատիկի հետ արքորի ճանապարհ գնացող Սիրանույշի հայրը, պարզվում է, զինակոչվել էր բանակ և սպանվել, իսկ մայրը մահացել էր տեղահանության ժամանակ: Այթընայը հրամայում է կերակրել նրան, խոսում է աղջկա հետ, և նրանք կարծես թե ընկերանում են: Նա շեշտում է. «Սիրանույշը երբեք չի ժպտում» (էջ 30): Երբ քարավանը ստանում է առաջ շարժվելու հրաման, Այթընայը աղջկա տատին առաջարկում է համաձայնի, որ ինքը որդեգրի Սիրանույշին: Կտրականապես մերժելով՝ ծեր կինը հետևյալն է ասում. «Մենք կգնանք միասին և կմեռնենք միասին: Ինչպե՞ս եմ նրանց տանելու: Շատ պարզ: Ճանապարհին նրանց գետն եմ նետելու, ապա ինքս կնետվեմ ջուրը» (էջ 36):

Այթընային հուզում է ոչ միայն Արևելքից՝ ռուսական սահմանի մերձակայքից, եկող հայերի, այլև Էսքիշեհիրի հայկական համայնքի ճակատագիրը: Նախ նա նշում է, որ տեղի հայերը ևս ի վիճակի չէին օգնել իրենց ցեղակիցներին, ապա փաստում, որ որոշ ժամանակ անց նրանց տեղահանության հրամանը ևս տեղ է հասել: «Երկաթգծի շրջակայքում գտնվող հայկական շքեղ, նրբաճաշակ տները դատարկ էին: Կապիտալի ու առևտրի բարձունքներ նվաճած էթնիկ տարրը հետևեց կառավարության հրամանին և բարձրացավ Վերին Էսքիշեհիրի արվարձաններ և այժմ նրանց դատարկ տները թանկարժեք գորգերով, նրբաճաշակ սենյակներով ու փակ դռներով կարծես սպասում էին վտարանդիների վերադարձին» (էջ 11-12): Այթընայը անդրադառնում է նաև այն փաստին, որ Էսքիշեհիրի՝ հայերին պատկանող լավագույն տները հետագա տարիներին տրվեցին վերնախավի մի շարք ներկայացուցիչների՝ Մեհմեդ Ռեշադ սուլթանին, Թալեաթ բեյին, Ջամբուլաթ բեյին, Իսմաիլ Հաքքը փաշային (էջ 12)¹:

¹ Հայկական «լքյալ գույքի» մասին մանրամասն տե՛ս **Աստոյան Ա.**, Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Երևան, 2013:

Ունեցվածքից զրկված և տարագրման դատապարտված Էսքիշեհիրցի հայերին օգնելու իր ջանքերին անդրադառնալով՝ Ալթընայր հավելում է. «Ես խնդրեցի գերմանական հյուպատոսին խոսել Ստամբուլում Ավստրիայի դեսպանի հետ, համոզել նրան միջնորդել իշխանություններին, որ գոնե կաթոլիկ հայերը մնալու թույլտվություն ստանան: Հաջորդ օրը եկավ որոշում, որ կաթոլիկ հայերը, զինվորականների ընտանիքներն ու երկաթգծի աշխատողների ընտանիքները կարող են մնալ: Երիտասարդ հայ աղջիկները սկսեցին հարաբերություններ հաստատել երկաթգծի աշխատողների հետ, որոնք նորմալ պայմաններում չէին կարող անգամ նրանց ծառան լինել: Որոշ հայեր ուզում էին իսլամն ընդունել, բայց կառավարությունը թույլ չտվեց» (էջ 34):

Որոշ ժամանակ անց, սակայն, կաթոլիկները և մյուս հայերը ևս աքսորվում են: Ավելին, Ալթընայր գրում է նաև պոլսահայ մտավորականության ձեռքակալությունների և տեղահանության մասին. «Բոլոր մտածող, հայրենասեր հայերն աքսորվեցին» (էջ 43): Նրա թվարկած անունների շարքում առավել կարևոր են օսմանյան մեջլիսի անդամներ Գրիգոր Չոհրապի և Վարդգեսի սպանության հետ կապված մեջբերումները: Ձեմալ փաշայից հրաման ստանալով ձեռքակալել հայերի հայտնի դահիճ Չերքեզ Ահմեթին՝ Ալթընայր որոշում է անձամբ խոսել նրա հետ ու հասկանալ մարդասպանի հոգեվիճակը: Նա ամբողջությամբ մեջբերում է այդ գրույցը. Չերքեզ Ահմեթը հպարտությամբ խոստովանում է, որ Դիարբեքիր տանող ճանապարհին իր մարդկանցով հարձակվել է և սպանել նախ Վարդգեսին, ապա քարով այնքան է խփել Չոհրապի գլխին, որ վերջինս մահացել է: Չերքեզ Ահմեթը, սակայն, իրեն մեղավոր չի համարում. «Եղբայր, սա նվաստացուցիչ է: Ես ծառայել եմ իմ հայրենիքին: Գնա ու տես: Վանն ու շրջակայքը Քաաբա լիճ եմ դարձրել: Այսօր դու այնտեղ նույնիսկ մի հայ չես կարող գտնել: Ես ծառայել եմ հայրենիքիս, իսկ Թալեաթի նմանները Ստամբուլում նստած գարեջուր են խմում, մինչ ես կալանքի տակ եմ» (էջ 41):

Հայկական կոտորածների հրաման տվողների և իրագործողների կապի, ինչպես նաև անհատների մեղավորության հարցը այնքան է կարևորվում Ալթընայի համար, որ նա ոչ միայն բազմիցս շեշտում է իր անմեղությունը, այլև նշում, որ Էսքիշեհիրի բնակչությունն առհասարակ չի մասնակցել հայերի դեմ կատարված հանցագործություններին: Նրա համոզմամբ՝ հայերի բնաջնջումը ոչ թե բնակիչների կամ ոստիկանների, այլ Թալեաթի անմիջական մեղքն է: Էսքիշեհիրի ու առհասարակ հայերի ճակատագրին վերաբերող հուզական մտորումները Ալթընայն ավարտում է՝ «Անմեղ աղջիկ, Միրանու՛շ, ու՛ր ես» նախադասությամբ (էջ 45):

Ա. Ռ. Ալթընայի «Երկու կոմիտե, երկու ոճիր» գրքի առաջին գլուխը փաստորեն թուրքական հուշագրության այն եզակի նմուշներից է, երբ հեղինակը ներկայացնում է իրերի իրական դրվածքն ու գրեթե չի փորձում դրանք մեկնաբանել ժխտողականության կամ հայամերժության տեսանկյունից: Միաժամանակ, սակայն, նա նույնիսկ հաճախ է գրում թե՛ հայերի «ապս-

տամբության ու դավաճանության» և թե՛ երկուստեք զոհերի մասին: Փորձելով ներկայանալ իբրև հումանիստ՝ նա չի մոռանում նաև նշել, որ մի շարք դեպքերում տեղահանությունը պատերազմական իրավիճակից բխող «օբյեկտիվ» անհրաժեշտություն էր: Ավելին, Ալթընայը փորձում է հայերի տեղահանությունն ու կոտորածը ներկայացնել ոչ թե որպես պետական քաղաքականության դրսևորում, այլ առանձին անհատների որոշման հետևանք: Այսպիսով, նա փաստում է ոչ թե թուրքական պետության, այլ միայն երիտթուրքերի պարագլուխներ Էնվերի ու Թալեաթի մեղավորությունը՝ այս հարցում լիովին անտեսելով, սակայն, Ջեմալ փաշայի դերը:

Նրանց մեղավորության հարցը երկար քննարկման ու վերլուծության առարկա է նաև գրքի երկրորդ մասում: Շեշտելով, որ հայերի հետ պայքարի տեսանկյունից Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմը իրականում հաղթեց (էջ 47), Ալթընայն այստեղ փորձում է ցույց տալ պատերազմի վերջին ամիսներին գրեթե մասնատված օսմանյան պետության ղեկավարների անտարբեր մոտեցումները և դրանց հետևանքները, ինչպես նաև այս համատեքստում անդրադառնում է Էրզրումում, Տրապիզոնում, Սարիղամիշում և այլ քաղաքներում հայերի կազմակերպած «կոտորածներին»:

Գրքի երկրորդ մասի սկիզբը թվագրվում է 1918 թ. մայիսի 6-ով և սկսվում էրզրումի նկարագրությամբ: Հարկ է նշել, որ 1918 թ. ապրիլի 17-մայիսի 20 ժամանակահատվածում Ա. Ռ. Ալթընայը որպես օտարերկրյա լրագրողների պատվիրակության ղեկավար, շրջել է Բաթում, Տրապիզոն, Էրզրում, Էրզինջան (Երզնկա), Կարս, Արդահան, Արդվին քաղաքներում և հարակից տարածքներում՝ հայերի «ոճրագործությունները» տեղում քննելու նպատակով¹: Այս ուղևորության որոշ նոթեր ներառված են նրա այս գրքի երկրորդ գլխում, իսկ «Կովկասի ճանապարհներին հուշեր և հույզեր»² խորագիրը կրող նրա գրքույկը դրանց ամբողջական արտացոլումն է, որը ևս առաջին անգամ արաբատառ հրատարակվել է 1919 թ.: Հետագայում ընդամենը 15 000 տպաքանակով դրա տառադարձված տարբերակը լույս է տեսել նախ 1981 թ., ապա 1986 թ. (էջ 5), սակայն մեծ հետաքրքրության չի արժանացել: Գրքի՝ 1997 թ. տպագրված տարբերակում առաջաբանի հեղինակ Յունուս Ջեյրեքը ընդգծում է, որ Թուրքիայի նկատմամբ հայերի պնդումները անհիմն են, դեռ ավելին՝ ռուսներին մշտապես աջակցած և պատմությունից այդպես էլ դասեր չքաղած հայերը իրենք պետք է ներողություն խնդրեն թուրքերից (էջ 6-7):

Ուշագրավ է, որ Յունուս Ջեյրեքը նաև Վրաստանին է մեղադրում Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներ ունենալու համար և նշում, որ իրենց «փոքրիկ հարևանը» իր պետությունից վերցնում է թուրքերի եղբայր-

¹ Gökmen M., նշվ. աշխ., էջ 17:

² Refik A., Kafkas Yollarında Hâtıralar Ve Tahassüsler, İstanbul, 2001 (այսուհետ միայն այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ):

ների՝ աջարների համար նախատեսված նյութական օգնությունը և այն կիրառում Թուրքիայի դեմ (էջ 5):

Նշենք, որ Ալթընայի նախորդ գրքի երկրորդ մասում հայերին վերաբերող անդրադարձները գրեթե նույնությամբ արտացոլված են նաև այստեղ, ուստի չկրկնելու համար նպատակահարմար է մեջբերումներ կատարել այս հրատարակությունից: Կցանկանայինք շեշտել նաև, որ հեղինակի պնդումները հերքող հայկական սկզբնաղբյուրներ գրեթե չենք ընդգրկել, քանի որ ցանկություն չունենք վերապացուցել միջազգային ճանաչում ունեցող տարբեր գիտնականների կողմից վաղուց ի վեր հիմնավորված ու ներկայացված իրողությունները: Խնդրո առարկա գրքից ներկայացվող մեջբերումների միջոցով փորձելու ենք ցույց տալ թուրքական քարոզչամեքենայի ժխտողականության հարյուրամյա փորձի ակունքները:

«Կովկասի ճանապարհներին հուշեր և հույզեր» գրքի շարադրանքը սկսվում է 1918 թ. ապրիլի 17-ից՝ Տրապիզոնի և նրա շրջակայքի հուզական նկարագրությամբ: Առհասարակ կիսաառումանտիկ զեղումներն այս գրքում առավել մեծ տեղ ունեն, քան փաստերի և իրողությունների նկարագրությունները: Ի տարբերություն իթթիհադականների հակահայկական գործունեությանը վերաբերող գրառումների՝ հայերի «կազմակերպած» սպանությունների նկարագրություններում որևէ փաստարկված հիմնավորում կամ հստակ տեղեկություն չկան: Հեղինակը սուսկ նկարագրում է իր այցելած քաղաքներում տիրող անմխիթար իրավիճակը, որի համար մեղադրում է «հայկական կոմիտեներին»: Սակայն նույնիսկ հստակորեն պարզ չէ, թե նա ինչ նկատի ունի «հայկական կոմիտեներ» ասելով:

Գրքի առավելապես քարոզչական բնույթի մասին է վկայում նաև այն, որ, ինչպես կտեսնենք Կարսի բերդի նկարագրությունում, Ալթընայը երբեմն նույնիսկ հակասում է ինքն իրեն՝ հայերին մերթ արյունարբու մարդասպաններ, մերթ թուրքերից փախչելով Ռուսաստանում ապաստան գտած փախստականներ ներկայացնելով:

Տրապիզոնը նկարագրելիս նա գրում է, որ քաղաքն ավերակ է, կանայք երեխաների հետ ստիպված են ուտելիք փնտրել: Մի տարեց կին պատմում է, որ ռուսների գնալուց հետո հայերն ու հույները բազմաթիվ վատություններ են արել մուսուլմաններին, ովքեր արդեն վախենում են տնից դուրս գալ:

Այս համատեքստում նշենք, որ Ա. Ռ. Ալթընայը յուրահատուկ վերաբերմունք ունի ռուսների նկատմամբ: Նրանց Թուրքիայի կարևորագույն թշնամի համարելուն զուգահեռ՝ նա շեշտում է, որ ռուսներն իրենք են շատ հաճախ հայերի պայքարը թուրքերի դեմ սահմանափակել: Ավելին, նա ընդգծում է, որ ռուս-թուրքական պատերազմների արդյունքում ռուսների ձեռքում հայտնված բոլոր քաղաքները առաջընթաց են ապրել նրանց իշխանության օրոք, կառուցապատվել են և բարեկարգվել: Ըստ հեղինակի՝ իրավիճակը փոխվել է 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, քանի որ ստեղծված քառսային պայմաններում հայերն ազատ գործելու հնարավորություն

են ստացել և փորձել օսմանյան զինվորներից վրեժ լուծել (էջ 14): Մեջբերելով իբր ակնատեսների վկայությունները՝ Ալթընայը գրում է հայերի և հույների կազմակերպած սպանությունների մասին, ապա հղելով մի կնոջ՝ նշում, թե նրանց համեմատ ռուսները (կամ տեղացիների խոսքով՝ «մոսկովացիները») օրհնություն էին. «Մեր անցյալ տարվա հայրենակիցները ռուսներից ավելի մոսկովացի են դարձել» (էջ 13): Սարիղամիշում մի մոլոկան կառապանի հետ իր գրույցը մեջբերելով՝ Ալթընայը փորձում է ցույց տալ, որ ոչ միայն թուրքերը, այլև այս տարածաշրջանում ապրող բոլոր մարդիկ հայերից դժգոհ են. «Թուրքը լավն է, վրացին գայլի նման է, հայն էլ յաման է» (էջ 56):

Քաղաքից քաղաք շրջելով՝ նա ներկայացնում է գրեթե նույն պատկերը՝ սով, փլատակներ, դիակների կույտեր:

Բաթումը նկարագրելիս Ալթընայը գրում է. «Ապրիլի 14, սիրո և հաճույքի քաղաքը դատարկ էր, խանութների մեծ մասը՝ փակ, հայերն ու վրացիները օսմնացիներին աջակցելու համար քաղաքացիներին [աջարներ] կողոպտել, խանութները թալանել են... Քաղաքի ամենանուրբ, ամենաքաղաքակիրթ, ամենագեղեցիկ թաղամասը, ռուսական արվեստի հրաշագեղ օրինակներ ցուցադրող փողոցներն ու թաղերը դատարկ են» (էջ 18): Նույնպիսին է իրավիճակը նաև Արդասա (Թորուլ) քաղաքում. «Մզկիթն ու մեդրեսեն ախոռ են դարձել, գերեզմանոցի մի մասը սրճարանի է վերածվել» (էջ 27): Իսկ ճամփորդության հաջորդ խոշոր կանգառի՝ Էրզինջանի մասին նա գրում է. «Մայիսի 2, Էրզինջանը մեկն է այն տարածքներից, որտեղ հայերն են եկել ռուսներից հետո: Յոթ հարյուր մարդ է սպանվել, վառվել, նետվել ջրհորը հայերի կողմից» (էջ 35): Շարունակելով ճանապարհը Երզնկայի դաշտավայրով՝ Ալթընայը նորանոր ահասարսուտ նկարագրություններ է անում. «Սով, հայերի կողմից կտրված գլուխներ, մասնատված մարմիններ... ոչ մի գեղեցկություն, ոչ մի ծաղիկ սփոփանք չի դառնում» (էջ 40): Էրզրում քաղաքը անվանելով «վիրավոր հերոս»՝ նա նկարագրում է հրդեհված տները, կոտորածն ու հայերի «ողորմաճությանը թողնված» կանանց ու երեխաներին (էջ 46): Նմանատիպ իրավիճակ է տիրում նաև Մամահաթունում, Սարիղամիշում և մի շարք մեծ ու փոքր բնակավայրերում:

Հետաքրքիր է, որ Ալթընայը իր նկարագրած ահասարսուտ տեսարանների մեղավոր համարում է բացառապես հայերին: Ըստ նրա՝ ճանապարհին հանդիպող դիակույտերը, մարդկային մարմինների փտող մասերը պատկանում են թուրքերին, սակայն գրքում չկա որևէ հիմք կամ փաստարկ այս պնդումն ընդունելու համար: Ավելին, առավել հավանական է, որ նման տխուր ճակատագրի արժանացել են թուրքական կոտորածի զոհ դարձած հայերը, իրողություն, որի մասին Ալթընայը խուսափում է գրել:

Յուրահատուկ են 1918 թ. Կարսի գրավման դրվագների նկարագրությունները: Դեպի Հայաստան թուրքերի արշավանքը Ալթընայի անթաքույց հպարտության պատճառն է: Նա փորձում է համեմատականներ անցկացնել օսմանյան փառիշահների և իր ժամանակակիցների հարձակումների միջև.

«Գիշերը Կարսի գրավումը հրաշալի է եղել: Հայերը չեն իմացել, ուր փախչել, ինչ անել: Քաղաքն ու մուսուլման գերիներին պաշտպանելու համար հույներին մի դասակ են կազմել: Սակայն մեր զինվորների ճշգրիտ գործողությունների շնորհիվ այս քայլն օգտավետ չի եղել: Գիշերը քաղաքը կրակների ծով է դարձել: Մյուս կողմից մեր զինվորներն են Կարս մտել: Փողոցներում գոռում-գոչյուն, ճիչ ու աղաղակ էր» (էջ 63): Գրավման «փառահեղ» տեսարանին սակայն հաջորդում են քաղաքի վիճակը նկարագրող սարսափելի տողեր. «Եկեղեցուց քիչ այն կողմ Կարսի կայարանը իրերով էր լի: Կայարանի առջև ուրվագծվում էին երկու-երեք հսկա վագոններ, որ հայերը չէին կարողացել տանել: Ամենուր սեղան, կոշիկ, ներքնակ, գիրք, սնդուկ, անկողին, պահարան, ցորենով լի պարկեր, բմբուլ, կարտոֆիլ, լոբի, բամբակի ու վուշի կույտեր-կույտեր: Մնդուկների կափարիչները կոտրել, պարունակությունը ստուգել ու խառը կույտերով թողել էին... Ջամբուղների, նավերի, լամպերի, հայերեն ու ռուսերեն գրքերի վրա ներքնակներից թափված բմբուլներն էին: Շատ ապրանքներ ցեխի մեջ էին» (էջ 64):

Այթընայը Կարսից ոչ պակաս կարևոր կետ է համարում Գյումրին՝ այն կոչելով «նոր ձեռք բերված հայրենիք» (էջ 52):

Այսպիսով, Ահմեթ Ռեֆիք Այթընայի հուշերը, որոնք իրենց ոճով փոքրինչ տարբերվում են Օսմանյան կայսրության գոյության վերջին շրջանի գործիչների հուշերից, բովանդակային առումով մի շարք նմանություններ ունեն դրանց հետ, հատկապես հայերին վերաբերող հարցերի մեկնաբանության համատեքստում: Որոշակի օբյեկտիվ դատողություններին ու փաստական հետաքրքիր նյութին հակառակ՝ նա, ի վերջո, սատարում է թուրք պատմաբանների համար սովորական դարձած՝ հայերի դաժանությանը, թուրքական կողմի սոված զոհերին առնչվող թեզերը:

Наира Погосян, Гор Оганесян – Армяне в мемуарах турецкого историка Ахмеда Рефика Алтыная

Данная статья посвящена исследованию двух небольших автобиографических книг, принадлежащих перу турецкого писателя, историка и военного деятеля Ахмеда Рефика Алтыная. Книга «Два комитета, два преступления» – сравнительный анализ деятельности комитета младотурок «Единение и прогресс» и Армянского революционного союза «Дашнакцутюн». Автор критикует деятельность младотурок и даже пишет, что они, в частности Энвер-паша и Талаат-паша, виновны в распаде империи. В то же время Алтынай обвиняет армян в том, что они «поверили» русским и «предали» турок. Пытаясь представить основные причины и последствия политики османских властей в отношении армян в 1915-1918 гг., автор также обращается к вопросу о массовой депортации армян и проблеме раздела имущества, «оставленного» армянами после геноцида. Вторая книга, «На дорогах Кавказа: воспоминания и чувства», представит ситуацию в Эрзруме, Карсе, Гюмри и в ряде других городов глазами Алтыная, побывавшего там в мае-апреле 1918 года. В данной книге автор в достаточно сентиментальной манере рассказывает о военных действиях турок на этих территориях и пытается обвинить армян в «резне мирного турецкого населения».

**Naira Poghosyan, Gor Hovhannisyan – *Armenians in the Memoirs
of Turkish Historian Ahmet Refik Altınay***

The present paper focuses on the two small-volume autobiographic books, written by the Ottoman Turkish writer, historian and military officer Ahmet Refik Altınay. The book “Two Committees: Two Massacres” represents a comparative analysis of the activity of Young Turks committee and Armenian Revolutionary Dashnakcutyun committee. The author highly criticizes the policy of the Young Turks and even considers that they, especially Taleat and Enver pashas, were guilty for the collapse of the empire. At the same time, Altınay blames the Armenians for trusting the Russians and ‘betraying’ the Turks. Pretending to represent the main reasons and consequences of the policy of the Ottoman authorities towards Armenians in 1915-1918, the author also refers to the mass deportations of Armenians and the problem of Armenian properties abandoned after the Genocide. The second book “On the Caucasus Roads: Memories and Emotions” sheds light on the situation in Erzurum, Kars, Gyumri and other cities according to the author, who was there in April-May, 1918. In this book the author in a very emotional manner represents military actions of Turkish troops in these regions and tries to blame Armenians for “killing the Turkish civilians”.

Ներկայացվել է 24.09.2019

Գրախոսվել է 01.10.2019

Ընդունվել է տպագրության 05.11.2019